



Ջուր արծթէ լէկանով եւ խարիխով . եւ լուս-  
 ցեալ տվին սրբիչ եւ նստուցին կարգաւ . երեկ  
 զանազան կերակուր եւ անապակի զինի , մար-  
 դազլուիս օխայ մի ամէն մէկի առջեւ եւ Ջուր  
 90 ըստ սահմանաց իւրեանց . բայց դու որպէս  
 կամիս այնպէս ըմպէ . զի թէ զայն ըմպեն ա՛յլ  
 տան . բայց Հայք առանց ջրոց ըմպեն . եւ գի-  
 նին եօթն տարեկան՝ անգիւտ այլ տեղիս :  
 եւ այլ կարգաւորքն սպասաւորէին մեկ . մեք  
 95 ԺԲ հոգի նստաք ըստ երկուստան անաքե-  
 լոց . եւ այլում տեղող ՀԲ նստան ըստ ՀԲ ա-  
 շակերտացն որիչ . եւ ամէն մարդու եօթն ,  
 ութ սկուտեղ ճաշ բերին մեծագին . զորն ու-  
 աել կարես՝ կէր , եւ զորն չուտես զնեն մար-  
 100 բամառ հետ տար . ամէն լոխման ուսուց մի  
 կ'աթէ . եւ յետ կերակրոյն շէքէրլէմէնի եւ  
 զնոց հարվանի տան , քաղցր եւ անուշ . դաշն ,  
 դանակն , դարսիքն եւ այլն ամէն արծաթեղէն  
 է : Բայց հայուն առաւել պատու կ'առնեն եւ  
 105 ի գլուխ տեղ նստեցուցանեն :

Երկրորդ ողորմութիւնն . զի ամէն դուրս  
 ելնելու ատաթ է որ ին զուսուշ բաշխեն աղ-  
 քատաց . զի թէ հեռու երթայ՝ ի մաֆայ նստի ,  
 երկու ջորի լծած , մինն առաջ եւ միւսն յե-  
 110 աին . եւ վեց ջորի սպիտակ . վեց ետքնետակ .  
 վրանին կարմիր մախմուր ձղած մինչեւ ի գե-  
 աին . եւ ինքն ալ կարմիր կու հագնի . եւ իւր  
 բոլորն շուրջանակի այլ զինուորք չի մօտե-  
 նան . միայն ալամանքն մօրվօք որ են տու-  
 115 աէշք<sup>1</sup> , զոր ասեն թէ Լուսաւորիչն եթող :

Երրորդ ողորմութիւնն Փափին , որ ամէն  
 տարի Ծ հոգի պիտոր կարգէ յարանց եւ կա-  
 նանց , իգին ճիւղ եւ մայեա . արուին՝ սէր-  
 միայ , մարդուն կօրա . ոմանց ձ զուսուշ ,  
 120 ոմանց Ծ կամ աւելի եւ պակաս : Եւ ամէն  
 վանից ալ սահմանք է , որ կարողութեան  
 կօրա պիտոր կարգեն Ծ կամ Կ կամ այլ աւելի  
 որք աղջիկ եւ վախիր կարիճնի . զի յաշխարհն  
 այն աղջիկն շատ է եւ մարդն սակաւ . վասն  
 125 որոյ պիտոր շատ ճիւղէ տան , թէ չէ մարդ  
 չի առնուր զկինն առանց դրամի . որպէս եւ  
 ի Լէհաց յերկիրն :

Չորրորդ ողորմութիւնն Փափին որ գային  
 արել է . քանի հարիւր աղքատ կարգաւորաց  
 եւ քահանայից , նաեւ աշխարհականաց , որ  
 130 ամէն օր այսչափ հաց , զինի , միս եւ այլն  
 կու տան . որք ծերք են , անկածք , անկարք ,

հիւանդք , չքաւորք , որքք , այրիք եւ անանկք ,  
 աղքատք եւ այլն :

Հինգերորդ ողորմութիւնն , որ ինչխատար 135  
 ուխտաւոր կու դայ ամէն աշխարհէ՝ իրեք օր  
 պիտոր ուտեցնէ , խմցնէ :

Վեցերորդ ողորմութիւնն . ինչ մարդ որ  
 գայ ուխտ , թէ աշխարհական , թէ կարգա-  
 140 ւոր , Ե . զուսուշ , Ժ . Ի . Լ . կու տայ խարճլիս .  
 ապա կարգաւորաց Ժ . ԺԵ . Ի զուսուշ , թէ  
 եպիսկոպոս ձ , թէ վարդապետ Բձ . Գձ  
 զուսուշ . տես թէ տարին քանի հազար կու  
 տայ :

Յօթներորդ , զի որչափ հրեայ կամ տա- 145  
 ճիկ դառնայ եւ քրիստոնեայ լինի , Փափն  
 պիտոր հաղցնէ սպիտակ յոտաց մինչ ի  
 գլուխ . այլ եւ տայ իւրեանց սէրմիայ կամ նա-  
 Փաղոյ , մարդուն կօրոյ՝ Ժ զուսուշ , Ի կամ Լ :

Ութերորդ ուսմն Փափին , զի որչափ որք 150  
 տղայք կան , անձարակ աղջկունք , պիտի Ժ .  
 դովէ դնոտա , դանահաթ տայ . տես թէ որչափ  
 տղայք իւրեանց եւ յօտարացն կու գտի անդ :

Իններորդ դաքաթն . որ ամէն տարի աւագ 155  
 հինգշաբթի ԺԲ հոգոյ դոտս պիտի լուանայ  
 եւ օր մի յառաջ բաղնիք դրկէ եւ տայ նոցա  
 շապիկ , վարտիք , չուխայ սպիտակ , բարուշ ,  
 գտակ . եւ լուացեալ դոտան նստուցանէ ի սե-  
 դանն . եւ հայն ի վեր նստի . եւ ամէնին ա-  
 նուն տայ զառաքելոց . բայց հային Պետրոս . 160  
 եւ յետ կերակրոյն տայ ամէն մէկի երկու  
 պէսպէս եւ երկու խաչ պատկերք , մին սակի ,  
 մինն արծաթի :

Տասներորդ ուսմն . Սան Սփիրիդու սրի- 165  
 դալն , որ քան դքաղաք մի է , որպէս յառաջա-  
 դոյն ասացաք , թէ որչափ մարդ կայ , եւ որ-  
 չափ խարճ կ'երթայ կերակրոյ , անկողնոյ ,  
 փայտի եւ այլոցն :

ԺԱ . զի ժողովել է իւր քաղաքն ի Հոռոմ 170  
 ճի աղղ եւ ունին ամենայն աղղն եկեղեցի ,  
 սրիդալ , դպրատուն , կերակուր , անկողին ,  
 ասօչակ : Նոյնպէս Հայք եւս ունին ժամ , սրի-  
 դալ , դպրատուն , բայց տղաք չկան . միայն  
 երկու տղայ կայր . զի Հայք սակաւ են : Այլ եւ  
 պատմագիր է հանած . զոր մեք աչօք մերովք 175  
 տեսաք . Աստուած զիւրեանց հոգին լուսա-  
 ւորէ , որ դմեղ աւելի կու հոգան քան թէ մեք .  
 եւ ասին թէ ԺԻ զուսուշ կու հայի պատման .  
 սպա սյժմ պաթալ է , ոչ բանեցնող կայ , ոչ

145 յորչափ : — 146 քրիստոնեա : — 150 զի չափ :  
 — 157 շապիկ : — 159 հայրն : — 166 կա նաեւ վարք :  
 — 167 կ'երգայ : — 179 յայժմ : բանեցնող :

91 ըմպէս : — 95 երկուստանն : — 102 դքալն :  
 — 121 կարողութեան :

<sup>1</sup> Այսինքն tedeschi :

180 բանող՝ մեր ազգիս էհմալութենէն եւ չա-  
 րեացն , որպէս եւ ի վանատիկն :

ԺԲ . վարձքն , զի այնպէս շաղաւաթ կայ  
 աշխարհն Փափին , զի որչափ գերի փախչի եւ  
 անկանի երկիր նորա , ազատի : Սպանիւ թա-  
 185 գաւորն պիլախատիր չէ հանել , թէ մկրտի ,  
 այլ ուրիշ տեղ թէպէտ մկրտի ալ չի ազատեն .  
 քանզի կ'առնեն թէ նաչարէ եւ յակամայ լինիս  
 քրիստոնեայ , եւ չէ Աստուծոյ ընդունելի : Թող  
 այն առենն լինէլը երբ տունդ էիր եւ անձն-  
 190 իշխան : Իսկ Փափն ոնց մկրտի՝ կ'ազատէ :

ԺԳ . ուսմն , զի որչափ միասակարք 195  
 ընրունին՝ աւագակք , գողք կամ այլք , սր  
 պիտի շանկալն զարնեն կամ չորս շարեկեն ,  
 նա յառաջ վիզն կու զարնեն կամ խեղդեն ,  
 195 ապա դայլ զսկէնճէն կ'առնեն որ զայն մեծ  
 կսկիծն չիմանան : Եւ կայ եկեղեցի մի նոցա  
 սուրբ Յովանու Գլխատունն , անդ թաղեն  
 դամենայն մահապարտս . եւ գան այն եկեղե-  
 ցոյ քահանայք խնկօք եւ մոմեղինօք , ըուֆա-  
 200 թով , սեւազգեստք եւ Գրիստոսի խաչալա-  
 մանն տանին յառաջ . եւ անդ միան մինչեւ  
 դահիճքն կատարեն զհրամայեալս . ապա առ-  
 նուն մեծաւ պատուով զղին , զնեն ի դազաղն  
 205 սաղմոսիւք եւ աւրհնութեամբ , թէպէտ եւ  
 մեղանչել է . ապա վասն քրիստոնէութեան եւ  
 զի խոստովանեցաւ , հաղորդեցաւ , պատվել  
 արժան է : Եւ ի ժամ կարեւորն չեն թողու  
 կախ կամ ի շանկալն կամ խաղալին , այլ առ-  
 210 նուն ի վար եւ տարեալ թաղեն :

ԺԴ . զի ունի Փափն վէթիլ մի ճարտա- 215  
 սան , որ հինգշաբթի զուսուշ կէլեր ունի .  
 վասն այն որ ամէն օր երթայ ի բանան եօթ-  
 լամիչ եւ թէչվիչ կ'անէ . ու կու քննէ հարցնէ ,  
 215 թէ վասն է՞ր զընտանած են . կամ թէ քանի՞  
 տարի է որ կայ . եւ թէ սուչսուղ եւ անմիաս  
 է : Քանզի շատ կու լինի որ անմեղ , անձա-  
 յւ անտէր ճար չունին , ոչ ծանօթ , ոչ մարդ ,  
 220 այնպէս միան ի բանան քանի տարի , զի մեծ  
 դնտան է , որպէս Պապաճաֆարն . նա երթայ  
 առ դատաւորն եւ հանէ :

ԺԵ . զի երբեմն եւ թագաւորաց խաղինայ  
 առաքէ , երբ մեծ սէֆէր ունին հետ թուրքի  
 225 կամ անհաւատից , օլօֆայ լէշքէրին . այլ եւ թէ  
 հարկ լինի եւ պակասի դրամ սուրբ Պետրոսի ,  
 զիրա մեծ խարճ ունի շինումն , նա կու տայ .

թող գայլ ծածուկ ողորմութիւնն որ մարդ  
 չի գիտէ , բայց միայն Աստուած :

Նաեւ եկեղեցիս չինէ ի բազում տեղիս 230  
 եւ այլ բարէգործութիւնս առնէ . զորս ի բազ-  
 մաց սակաւն գրեցի աստ : Եւ զծերն ընտրեն  
 եւ տարեցքն , որ հազիւ չորս , հինգ տարի  
 ապրի : Սակայն ազգն չար եւ դառնացողք  
 235 հերձուածողաց բազում բանս եւ բանպասանս  
 բարբառնջեն զնմանէ . բայց նա անպարտ է  
 յայնմ յամենայնէ . եւ զրպարտողքն զատա-  
 պարտելոց են ի Քրիստոսէ յաւուրն անեղին :

ՔԱՐՏԻՆԱԼՔ

Նմանապէս եւ քարտինալքն յոյժ փար- 240  
 թամք են եւ հարուստ . ունին քաղաքս , զիւլոս  
 եւ ազարակս եւ այլ եկամուտ . եւ են պերճ  
 եւ փառաւոր , անձնիշխան եւ ինքնակալ : Եւ  
 ամէն հինգշաբթի տիւան կ'երթան մօտ  
 Փափն . անտ է տեսանել զբազմութիւն կառաց  
 245 եւ ձիոց . կառքն սակիւած եւ մեծածախ , վեց  
 վեց ձիօք Սան Փեթրօյին մօյտանն կուտեալ :  
 Մին կառքն հազար զուսուշ . վրայի ծած-  
 կոյթն սքէռլէթ չուխայ : Ծինեն եկեղեցիս եւ  
 վանորայս , սբիդալ եւ դպրատունս . եւ ի  
 250 աղմուկ տեղիս կամարակապ բաղմածախ վի-  
 մաչն յօլովակնեան կամուրջս . եւ յերկիւ-  
 դալի տեղիս՝ իջեւանս եւ պանտոկս : Ունին եւ  
 զիւլոս ծածուկ վարձք . են որ ամէն շաբաթ օր  
 այլ ծածուկ վարձք . են որ ամէն շաբաթ օր  
 255 կերակուր կ'ուղարկեն ի բանան , հաց եւ  
 զինի . ոմանք յԱւագ հինգշաբթին կ'երթան ի  
 մեծ զընտանն . երկու , իրեք պարտաւորս ա-  
 վատեն վճարելով զպարտս նոցա : Եւ են որ  
 թային արել են քանի հոգոյ կերակուր : Եւ  
 սոքա եւս ամէն տարի ըստ կարողութեան ա-  
 մէն մէկ հինգ , վեց որք կու կարգէ եւ սէր- 260  
 միյա , ճիւղէ կու տայ : Եւ յորժամ Փափն մեծ  
 մարդու ողորմութիւն տայ , նոքա այլ պիտոր  
 տան : Եւ այլ բազում ծածուկ վարձք ունին ,  
 որ միայն ծածկագէտն զիտէ . զի ազգն այն  
 յոյժ ծածուկ սիրէ ողորմութիւն առնել եւ 265  
 առաքինութիւն :

Քարտինալքն եւս ունին իւրեանց ներքեւ  
 երկու , իրեք պօնսինօք , որք են քորեպիսկո-  
 պոսք , որ սոցա հրամանաւ չըջին եւ ձեռնա-  
 270 վրեն : Եւ այնպէս մեծամեծ սարայնիք ունին  
 եւ ծանրազին պարտէզք , դրախտք , որ ԼՌ ,  
 իՍՌ զուսուշ կ'աթէ եւ այլ աւելի :

Հարցաք թէ ո՞րչափ կարգաւոր կայ քա-  
 դաքս . եւ ասին թէ ժամանակ մի Փափն ի գիր

237 այնմ : — 238 սուրբն : — 265 ոյժ : — 268 քո-  
 սեպ : — 271 պարտէսք : — 272 յաւելի :

184 անկան : — 189 տունք : — 198 քան :



եւ կային զուսնափայլք, Փիւք, առիւծք, դամէնն հանած էր քարէն, որ միտք մարդոյ չի բաւել կամ գրել մի ըստ միտքէ զամենայն: Կային եւ այլ դրախտք մեծածախք. եւ ի միջի ազգ եւ ազգ թօ՛հֆանի, մի քան դմի ազնիւ. չնորհաց տվողին Աստուծոյ փառք հազար բերան:

Եւ կայր մէջ քաղաքին շատրվան մի մեծ, ի վերայ չորս վիշապաց. եւ չորս տղայք մէջ հաւուղին կանգնած եւ զառնացի անդամն բռնած. ուստի ջուրքն վազէին: Եւ տեղ մի այլ կարիւճ մի կանգնեալ. եւ արծիւն կտցովն զպորտն ծակել է, յորմէ բխէր ջուր: Եւ այնպէս առ նոսա ոսկի եւ արծաթն, ալն եւ մարգարտն յեկեղեցիս եւ ի տունս՝ որպէս առ մեղ փայտ եւ երկաթ: Եւ զբախտքն կամ վիճաշէն տներն, զոր միտք մարդոյ չի բաւէ գրել կամ ի մտի պահել:

ԻՐԻ ԶԱՐԲԱՆԱԼԻՐ

Կամ իմ պատմել ձեզ, ով եղբարք իմ, իրս զարմանալիս. զի սոքա իմաստութեամբ եւ հանճարով զանբանս եւ զանասունս ի գործածել են, եւ զանխօսս ի խօս: Եւ նախ սկսայց ի շանց. զի զխորտիկս խորովեն եւ պարտեն որպէս մարդ, կանդուն կարով ի վերայ ոտաց: Այլ եւ տեսաք փրթոտ մեծ շներս, զի սէբէթնի վիզն անցուցած կամ զկազաթն, եւ զբամն թղթով փաթտած ի մէջն զբաժ կերթան ի սպանտանոցն եւ գնեն միս եւ տանին ի տուն. եւ թէ ի ճանապարհի զօտար մեծ շունս տեսանէ՝ զառնայ յետս եւ գնէ զսպաթն այնմ տեղով ուր գնաց. եւ կենայ սակաւ մի, մինչեւ ցրվին շունք. ապա զայ առնու եւ տանի առ տէրն: Եւ թէ թոչունք սպանանն ի վերայ ջրոց, զրկեն զնոսա. նոքա երթեալ չըջին որոնեն եւ գտեալ բերեն տան ի տէրսն: Այլ եւ կաքաւս եւ զայլ որսս նոքա գտանեն եւ ցուցանեն տիրոջս իւրեանց: Իսկ կոյրքն եւ լուսաւորքն փոխանակ մարդոյ փոքրիկ շնակունէին. զոր ի վիզն պարան անցուցեալ, միւս ձոթն պարանին ի գօտին կապեալ կամ ի ձեռին ունէր. եւ շունն զամէն փողոցնին շուտած էր կարգաւ. եւ խանութիւնն ու տներն բոլոր չըջեր եւ այնչափ աղիողորմ ճայն ամէր եւ փաղաքչէր փարեղով, մինչեւ տային ողորման թիւն. եւ երբ տեսանէր տալն, ապա այլ տեղ տանէր գիւղն, որպէս կենդանի մարդն. եւ թէ կարիս ուղէր, գիտէր գտեղին շնակն եւ տանէր արտաքնոցն. եւ զամենայն կամս նորա

206 յիրս: — 211 յոտաց:

կատարէր զինչ եւ ասէր: Եւ վաճառականքն ամէնին ընդ ինքեանս լակոտս փոխանակ նոքարի եւ ծառայի. եւ թէ տեղ երթային կամ շուկան, նոցա պատվիրէին թէ լաւ պահէ զօտան, զխանութն կամ զկուսման. եւ նա նստեալ որպէս բանաւոր պահէր խիստ եւ ոչ շարժէր բնաւ ի տեղովն, մինչեւ տէրն իւր գայր. եւ թէ ոք մերձենայր կամ զօղանալ կամէր, հաջէր եւ վազէր ի վերայ նորա:

Այլ եւ տեսաք անդ ջորիս մեծամեծս, որ թուրքաց աշխարհն Շ, Ո զուուու կ'աժէր, եւ էջք որպէս ջորիս որ է, Չ զուուու կ'աժէին, զոր եւ Հարապ տեսայ այնպիսի ջորի մի, որ է զուուու գնեցին. եւ անբան անասունքն այնպէս հլու եւ լսողք են, որ զինչ տանն՝ զայն առնեն. երբեմն խաղային եւ երկու ոտաց վրայ կանգնէին, եւ զամենայն խօսս տէրանց հասկանային թէ բերել տանել, թէ դալ թէ գնալ: Այլ եւ հարեղայքն ի սովորական տեղիս ուղարկեն զէն, թէ այն տնէն գնայ փայտ բեր, ջուր կամ հաց. եւ նա գնացեալ ի դուռն զրային եւ ճայն ամէն եւ ոտամբք հարկանէին, մինչեւ ելեալ ի դուռն ականակէին զէն եւ իմանային վասն է՞ր եկեալ է. բառնային եւ ուղարկէին ի վանսն:

Ունէին եւ իշխանքն մեծամեծ շունս որպէս զոշխարս եւ սամսոնս. որ միշտ չըջէին ընդ տեսուս իւրեանց. եւ թէ ոք կովէր կամ հարկանել կամէր գաէրն՝ վազէին ի վերայ թշնամոյն եւ խածատէին: Յոսկի պատուհանս նոցա ունէին տուտիք, զուճիք եւ պլպուլք սովորեցուցած. այնպէս քաղցր եղանակն եւ զրոյցս տան, որ անցաւորքն ի սիրոյն թմբին. եւ գիտես թէ մարդիք են. եւ հայեցեալ իմանաս թէ տուտիք են եւ հայրան եղեալ մնաս եւ յամես ի գնայն. եւ թէ ոք առջեւ դռան կանգնի. ի վերուստ ճայնէ աղախնացն, թէ ելէք ի դուռս գող է եկեալ. եւ թէ բախես՝ կանչէ. շուտ բացէք զդուռն. եւ ինչ բան եւ զործ որ տեսնու՝ պատմէ աղային զամենայն:

Եւ ոչ թէ միայն զգազանս եւ զանասունս եւ զթոչունս, այլ եւ զերկաթս եւ զպղինձս ի գործ եւ արվեստս ամեն որպէս շնչաւորս. զի շինեն երկաթի ալապնի, որ զմիտն խորովեն, եւ սահաթնի եւ երկաթի մարդիք որ գանկակ զարնեն. եւ ազգի ազգի մանրարվեստ սահաթնի, որ տեսողացն է սքանչելի: Կան եւ արծիւք ի վերայ սահաթնուն, զի երբ կամ իս սահաթն զարնել, արծիւն զթեւան տա-

237 յինքանս: — 258 յոտամբք:

րածեալ ծափս հարկանէ: Եւ կան ժամաղիտակք շինած, որ քանի ժամուն ուղես զարթուցանէ զքեզ, թէ մէջ գլխերի, թէ հաւաթուցանէ զքեզ, թէ մէջ գլխերի, թէ հաւաթուցանէ զքեզ: Այլ եւ անգղայ տարեփառք տաս Աստուծոյ: Այլ եւ անգղայ տարեփառք որպէս ջրոյն երգս երգել տան. եւ փողն հնչէ եւ մարդկորէն ծառայէ. նոյնպէս երկաթն, փայտն եւ այլն: Զոր եւ այլ բազում բանս եւ գործս տեսեալ փառս տվաք Աստուծոյ:

(Շարունակելի:) Հրատարակեց Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՅՈՂՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

ԻՐ ԿԵԱՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆԻՐԻՆԵՐ

(Շարունակութիւն:) ԺԲ.

ՆԿԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐ ՎԻՆՆԱՅԻ, ԳԻՍԵԼԻՈՐՓԻ, ԿԵՕԼՆԻ ԵՒ ԲԵՐԼԻՆԻ ՄԷՁ, ՈՒ ՎԵՐԱԳԱՐՁ ԳԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆ (1884—1885)

Նոր վաստակներ, նոր դարիներ: Հաւառակ իր յառաջացած տարիքին՝ նկարելը տակաւին միջամուտն է նորանոր գործերու, նորանոր նկարահանողներու: «Այվազովսկի» անունը Եւրոպայի քաղաքներն իրարու լսելի կ'ընեն, ու ժողովուրդներ կը սպասեն անոր ինչպէս հրաշագործի մը:

Նկարչին զուրբ ալեգորիա է հիմայ, զէմքն աւելի պատկառելի, ճակատն ակօսուած նուաճումներու ճիւղն ու ճամբորդութեան անկանոնութիւններէն: Անկա իսկապէս մեծ զի արուեստագէտի մ'ազդեցութիւնը կը գործէ, առանց նախապաշար մտքերու: Կը գործէ, առանց նախապաշար մտքերն թիւնը կը տեսնուի Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ. Այվազովսկի կը հսկէ իր գործերուն ճաշակաւոր գետեղման: Նա քիչ յառաջ եղած էր վարչաւս:

Պատկերահանողէս առիթով վարչաւսիկ Գնեւերի կը գրէ. «Յ. Կ. Այվազովսկիի նկարները մեծ ուրախութիւն պատճառեցին Վիեննայի, Դիւսելդորֆի, Կէօլնի եւ Բերլինի մէջ: Աւստրիոյ զահաժառանգ Ռուզովի իշխանը եւ

Ստեֆանի իշխանուհին, Սերբիոյ Նաթալիա թագուհին, Կարլ Լուդվիկ իշխանն որ Վիեննայի մէջ յայտնի է որպէս ճարտարադիւտութեան եւ զեղարուեստի պաշտպան, եւ ուրիշ շատ նշանաւոր անձինք»:

Այվազովսկի, ինչպէս որ թերթերը գրած են օրը օրին, ո՛չ միայն գրաւած է զեղասէր ու արուեստասէր Վիեննացիին ու Վիեննուհիին ու շարունակութիւնը, այլ բոլորը, արուեստագէտներն ու զօրավարները, ճարտարապետներն ու արքունականները կապուած մնալէսներն ու արքունականները թեանցած են անոր ստեղծագործ անձնաւորութեան հետ. իսկ արքունիքը՝ մինչեւ պատկերահանողէսին վերջանալը — երեք անգամ է աւելի իր հիացմունքը եւ շնորհաւորութիւնները յայտնած է վարպետ նկարչին:

Նոյն ոգեւորութիւնը եւ զնահատանքը ունեցաւ զերման ժողովուրդը, երբ նկարելը հոն ալ պատկերահանողէս մը բացաւ: Առ հասարակ ծովային տեսարաններ էին իր ցուցադրութիւնը, նա ապրած էր ծովը, նա ապրած էր երկրներ ամէնէն պարզ երանգաւորութիւն՝ ամէնէն բարդ կուտակուած, ամպրոպային թխպոտութիւնը: Անոր գունափոխութիւններն, լուսաւորութիւններն ու մթութիւններն այնքան զեղեցիկ, վերացնող բան մ'ունին՝ որ մարդ պատաստի տարածութիւնը կ'ուրանայ՝ եթէ չափի տակ չի յայն: Ահա թէ ինչ կը գրէ վերոյիշեալ թերթը՝ խօսելով Բերլինի մէջ բացուած Այվազեան ցուցահանողէսին վրայ:

«Բերլինի մէջ ցուցահանողէսին քանի մ'անգամ այցելեցին Պրուսիոյ զահաժառանգ իշխանն իւր ամուսնոյն հետ: Գահաժառանգ իշխանն իւր բրած այցելութիւններէն միոյն ժամանակ՝ ցուցահանողէսի կառավարիչ Րիդլիխին յանձնարարեց հետեւեալ խօսքերն հասցնել Պրոֆ. Այվազովսկիին. «Երբ վերադարձել Պրոֆ. Այվազովսկի, եւ տեսնէք Պրոֆ. ըսէք զանոք թէ սքանչացայ իւր նկարներուն վրայ. տեսած չեմ երբեք այնպիսի նկար մը ուր օդն ու ծովը այնքան յստակ եւ թափանցիկ նկարուած լինէին»:

Այվազովսկի զէպի Ռուսաստան ուղեւոր՝ իր հետը կը տանէր զարձեալ շքանքներ, յաղթանակի դափնիներ ու փառք մը, որոն նման ոչ մէկ արուեստաւոր չէր տեսած: Նա իրբեւ Պետերբուրգի Պրոֆեսոր, կը սիրէր այցելութիւն ընել հոն՝ ուր այնքան խան-

1 Արեւելք, 1885, թ. 382: 2 Արեւելք, 1885, թ. 382, անդ: